

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 2

Ա. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՊԱՐԵԼ  
ՀԱՆՔԱՑԻՆ  
ՊԱՐԱՐՏԱՆՑՈՒԹԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՄԱԿԱԶՈՒԹՅՈՒՆ

Երեկո 1947



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

631.82

ԳՅՈՒՂԱՏԱՏԵԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏԶԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

3

№ 2

ԱՄՓՈՒԹ Է 1961 թ.

Ա. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՊԱՐԵԼ  
ՀԱՆՔԱՑԻՆ  
ՊԱՐԱՐՏԱՆՑՈՒԹԸ

ԳՐԱԴԱՐԱՆ

A 18061



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳԱ ՀՐԱՄԱԿՁՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1947

Տպագրված է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի  
նախագահության կարգագրությամբ:

Հայկական ՍՍՌ Գ.Ա. պրեզիդենտ Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Տ ՅԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ա. Ա.

ԱՐԴՅՈՒՆ Ք Գ Տ Ա Ր Ա Ծ Ա

Պրակի խմբագիր՝ Գ. ԳԱՎԹՅԱՆ

Ե Կ Ա Ր Ա Ծ Ա Ր Ա Ծ Ա Ր



1947  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ԽՄԲԱԳԻՐ  
Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ա. Ս. ԱՐԱԿՈՆՅԱՆ

Как нужно хранить  
удобрительные вещества

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР. Ереван, 1947 г.

Հղմնեալ մատղացար՝ (Ազգականի թ) հղմնչ յանձն մասնաշաբառ  
- դղմնեալ ուրեմն մերը և գաճը արա ըստու և ար քուու  
ուրեմն վերա մուտքայաբ և ամուսինը ։ Տայցառ որ զի՞  
- դու ի արածուցի Եւ ամուսինը մուտքաւորանու և մեխիսիարան  
- ու ամուսինը ։ Եւ ուրեմն պղմատունու ժողովու ենք զուս  
- ամուսինը ։ Եւ ուրեմն պղմատունու և պղմատունու ու պղմատունու  
- ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀՈՒՄԸ ՊԱՀԵՍՏՈՒՄ

Հանքային պարարտանյութերը ճիշտ պահելով մենք փըր-  
կում ենք նրանց մեջ պարունակվող սննդանյութերը անտեղի կո-  
րուստից, որը պարարտանյութի վատ պահելու դեպքում կարող  
է հասնել շատ մեծ չափերի։

Վատ խնամքի դեպքում հանքային պարարտանյութերը  
կրում են, ինչպես փիզիկական նույնպես և քիմիական փոփո-  
խություններ, կոշտանում են, դառնում են դժվարալուծ և բույ-  
սերի համար պակաս մատչելի։ Ուժեղ խոնավության դեպքում,  
կամ պարարտանյութը անծածկ պահելու դեպքում նրա սննդա-  
նյութերի մի մասը կարող է կորչել։

Հանքային պարարտանյութերը չի թույլատրվում անմի-  
ջապես թափել հողի վրա, մանավանդ երբ նրա խոնավանալու  
վտանգ կա, քանի որ պարարտանյութը կլանելով հողի խոնա-  
վությունը կարող է արժեքազուրկ լինել։

Քիմիական պարարտանյութերը պետք է թափել տախտակե-  
հատակի վրա, այն հաշվով, որ հատակի և հողի միջև մնա որոշ  
տարածություն։ Դիբախտարար ոչ բոլոր դեպքերում հանքային  
պարարտանյութերը պահելու գործում ցուցաբերվում է հարկ  
կղած խնամք։ Երբեմն երկաթուղու կայարաններում ստանալով  
հանքային պարարտանյութերը, բեռնաթափում են վագոնները,  
թողնելով պարարտանյութերը բացօթյա անձրեի և ծյունի տակ։  
Անկասկած նման անթույլատրելի վերաբերմունքը տեղիք է տա-  
լիս սննդանյութերի գգալի կուրուստի և վաս հասցնում գյուղա-  
տնտեսությանը։ Օրինակ՝ սուպերֆոսֆատից կարող է կորչել  
կամ փչանալ բույսերի համար մատչելի և գյուղալույծ ֆոսֆորի  
75%։

Հեղտ լուծվող ազոտական և կալիումական պարարտանյու-  
թերը անխնամ պահելուց կարող են արժեքազուրկ լինել, երբ  
երկաթուղու կայարանը ապահոված չէ գյուղատնտեսական մա-

տակարարման հիմնարկների (Քիմմաքի) պարարտանյութերի հատուկ պահեստով, ապա պետք է գործն այնպես կազմակերպել, որ ստացված քիմիական պարարտանյութերն անմիջապես տեղափոխվեն համապատասխան փոխադրական միջոցներով՝ կոլխոզի կամ սովխոզի պահեստները առանց որևէ կորուստի:

Ոչ բոլոր կոլխոզները և սովխոզներն են պահովված հատուկ պահեստներով՝ քիմիական պարարտանյութերի համար: Առանձին կոլխոզներում պարարտանյութերը պահվում են պատահական շենքերում կամ բացօթյա: Անհրաժեշտ է կոլխոզներում և սովխոզներում կառուցել այնպիսի պահեստներ, որ նրանք բավարարեն քիմիական պարարտանյութերը պահելու օրինավորված պահանջները:

Պահեստները մեծ մասամբ կառուցվում են 100—150 տոննա քիմիական պարարտանյութ տեղավորելու հաշվով, Բոլոր պահեստները պետք է աղահովված լինեն համապատասխան կշեռքներով: Պահեստները կառուցելիս ընդունված է մեկ տոննա պարարտանյութի համար նախատեսնել 2,8 լի տարածություն:

Մեր պայմաններում պահեստները նպատակահարմար է կառուցել քարապատ, աղյուսապատ, կամ առավել լավ է համարվում պատերը կառուցել տախտակով: Սակայն պետք է նշել, որ քիմիական մի շարք պարարտանյութեր չփվելով քարե պատերի հետ կարող են մասամբ կորցնել: Իրենց մատչելիությունը բույսի համար, քանի որ որոշ կրային կազմ ունեցող քարեր կարող են քայլայվել պարարտանյութի (օրինակ սուպերֆոսֆատի) մեջ հաճախ պարունակվող թթվի ազդեցությամբ և որոշ չափով զլրվարարույժ դարձնել պարարտանյութը: Այդպիսի պահեստներում պարարտանյութերը պահվում են կույտերով և այն հաշվով, որ նա չփվի պատերի հետ:

Հանքային պարարտանյութերի պահեստը պետք է լինի հավասարաչափ լուսավորված, պահեստի գոները պետք է լավ փակվեն, որպեսզի անձրևի ժամանակ դրսի խոնավ օդը չթափանցի պահեստը:

Հանքային պարարտանյութերը պահեստում պահելու ժամանակ անհրաժեշտ է՝

1. Ծոգ կ չոր եղանակին օդափոխել պահեստը, ցերեկը բացելով պահեստի բոլոր պատուհանները և դռները:

2. Խոնավ և անձրևոտ եղանակին դռները և պատուհաններն ամուր ծածկել հակառակ դեպքում որոշ հանքային պարարտանյութեր ուժեղ կերպով կամում են օդի խոնավությունը և խոնավանում:

3. Պետք է հրաժարվել պահեստ տեղափոխել հանքային պարարտանյութն առանց նրան նախօրոք չորացնելու, եթե նախախքան այդ անձրեսի տակ է ընկել և պարզերը թրջվել են:

Պարարտանյութերը ճիշտ և անկորուստ պահելու համար, անհրաժեշտ է ծանոթ լինել նրանց բնույթին, առանձնահատկություններին, այսպես օրինակ՝ սուպերֆուսֆուր պարարտանյութ, է 3—6% ից ոչ չափելի ազատ թթու պարունակելու դեպքում օդից խոնավություն քիչ է կանում, մինչեւ դառնում է խիստ հիգրոսկոպիկ, երբ ազատ թթվությունը ավելանում է 8% ից: Այն գեպքում, երբ սուպերֆուսֆատը ձեռք է բերում մեծ խոնավություն (21% ից բարձր) նախքան պահեստ տեղափոխելն անհրաժեշտ է պարարտանյութը նախօրոք չորացնել: Ելնելով սուպերֆուսֆատի խոնավության 4% ից պահեստում պահելու ժամանակ սահմանվում է այդ պարարտանյութի համար կույտի բարձրությունը 1,5 մետրից մինչև 2 մետր: Երբ պարարտանյութը շատ խոնավ է, պետք է պահել հսարափորին չափ փոքր կույտերով (մինչև 1,5 մետր): Մեծ կույտերով (մինչև 3 մետր բարձրություն ունեցող) պահեստում թույլատրվում է պահել սուպերֆուսֆատն այն գեպքում, եթե նա պարունակում է նորմալ խոնավություն: Սուպերֆուսֆատի նորմալ խոնավությունը 15% ից բարձր չպետք է մինչի: Զոր պահեստում այդպիսի պարարտանյութը կարելի է պահել 4—5 ամիս:

Սուպերֆուսֆատը չի կարելի թափել ուղղակի հողի կամ ցեմենտի հատակի վրա, անհրաժեշտ է նախօրոք տախտակից հատակ պատրաստել, հակառակ դեպքում սուպերֆուսֆատը շրփվելով ցեմենտի կամ կրոտ հողի հետ քայլայում է վերջինիս և կորցնում իր գյուրալույթ ֆուֆորի մի մասը:

Շատ չոր լինելու դեպքում (8—12% խոնավության ժամա-

նակ) սուլեբքոսվատը փոշիանում է և կարող է վսասել մարդկանց աչքերը ։ Ծնորհիվ այն հանգամանքի, որ սուլեբքոսվատը մեջ որոշ քանակությամբ ազատ ֆոսվորական և երբեմն ծծմբական թթուներ կան, նա քայլքայում է շորերը, կաշվե կոշիկները, մասնավանդ երբ կոշիկները խոնավ են, տուաջացնում է մարմնի բացմասերում վսասվածքներ։ Այդ իսկ պատճառով նպատակահարձար է, որպեսզի ղարաբանյութի հետ գործ ունեցող բանվորները գործածեն ռետինից երկարավերդ կոշիկները, շորերը և կոշիկները հաճախ թափ տալով մաքրեն առելերֆոսվատից, իսկ աչքերը պետք է պահպանել փոշուց՝ գործածելով աշխատանքի ժամանակ հատուկ ակնոցներ և հաճախակի լվացվել

Սուլեբքոսվատի մեջ եղած բարձր թթվության հետևանքով հաճախ վսասվում, կամ ժանգութում են տրանսպորտի միջոցները, տարածած, գյուղատնտեսական գործիքները, ինվենտարը և նույնիսկ շենքը։ Այս հանգամանքն աչքի առաջ ունենալով այդ ղարաբանյութի նկատմամբ պահանջվում է հատուկ զգուշություն։ Գյուղատնտեսական գործիքները չեն կարելի պահել պարարտանյութի հետ միասին, նույն պահեստում։

Կալցիում ցիանամիդ ։ — Ազոտական պարարտանյութ է, որը ներկայացնում է բրենից և կամ մոխրագույն փոշի պահեստներում կարելի է պահել տոպղրակներով և կույտերով, կալցիում ցիանամիզը առղքակներով դասավորելու ժամանակ պետք է ձգտել դարսել տոպղրակները հնարավորին չափ խիտ, որպեսզի քիչ օդ թափանցի կույտի մեջ, քանի որ իսոնավ օդի ազդեցության տակ նրա մեջ գտնվող չհանգած կերը հանդչում է, առաջ ջանում է CaCO3, պարարտանյութը ծանրանում է և մեծանում ծավալով, որի հետևանքով պարարտանյութը պատռվում են տոպղրակները, իսկ տղոտի սական պարունակությունը իջնում է։ Որոշ դեպքերում աեղի է ունենում անգամ ազոտի կորուստ։

Կույտերով պահելու գեպքում կալցիում ցիանամիզը նպատակահարմար է թափել տախտակից հատակի վրա, կույտերի բարձրությունը չգերազանցելով 3 մետրից։ Կալցիում ցիանամիզը հեշտ փոշիացող պարարտանյութ է, որի փոշին բացառաբար է ազդում թոքերի վրա, գրգռում է աչքերի և կոկորդի լորձաթաղանթը։ Կալցիում ցիանամիզը տեղափոխելու ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ձիերը, եղները չեն

հաշտվում կալցիում ցիանամբդի հոտի և փոշու հետ և կարող են  
այս կամ այն չափով մասսկել, եթե հատուկ ուշադրություն  
չդարձնել նրանց վրա, պահպանելով նրանց այդ պարարտա-  
նյութի փոշուց:

Ամոնիակային սելիտրա. — Սպիտակ գույնի, հեշ-  
տությամբ օդի խոնավությունը կլանող ազոտական պարարտա-  
նյութ է, որը պահպում է սովորաբար ամուր թղթե տոպրակնե-  
րով: Տոպրակները իրար վրա դասավորելու ժամանակ շարքերը  
չպետք է գերազանցեն 7-ից, հակառակ դեպքում չափից ավելի  
ծանրությունից տակի շարքի տոպրակներում պարարտանյութն  
ամրանում է և դառնում դժվար օգտագործելի:

Կալիումական պարարտանյութերը պահպում են կույ-  
տերով, եթե անդամ պարարտանյութերը ստացվում են կտորե  
տոպրակներով, անհրաժեշտ է անմիջապես դատարկել և տոպ-  
րակները լվանաւ իսկ եթե պարարտանյութը ստացվել է թղթե  
տոպրակների մեջ, կարելի է թողնել մինչև նրա գործածելը:  
Կալիումական պարարտանյութերն անհրաժեշտ է թափել փայտե  
հատակի վրա, ոչ ավելի քան 2 մետր բարձրություն ունեցող  
կույտերով:

Օդի խոնավության և ջերմաստիճանի տատանումներն ա-  
ռաջացնում են կալիումական աղերի քրանեցում, կույտերի  
արտաքին շերտը ծածկվում է խոնավությամբ:

Անասուններն ընդհանրապես լիզում են կալիումական և  
ազոտական աղերը, ընդունելով նրանց որպես ծանոթ սեղանի  
աղ: Անասուններին չպետք է թույլ տալ լիզելու այդ աղերը:  
Դեպք անասուններն անփույթ վերաբերմունքի դեպքում նրանք  
կարող են լիզել պարարտանյութերը և հիվանդանալ կամ նույ-  
նիսկ սատկել:

### ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԸ ՄԻՄՅԱՆՑ ԽԱՌՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Համարյա բոլոր գյուղատնտեսական կուտարաները մեծ  
պահանջ են զգում, ինչպես ազոտական, նույնպես և ֆոսֆորական  
ու կալիումական պարարտանյութերի, ելնելով բանվորական  
ուժի և ժամանակի խնայողության անհրաժեշտությունից, նպա-  
տակահարժար է այդ երեք քիմիական պարարտանյութերը տու-  
միաժամանակ: Սակայն շատ դեպքերում, քիմիական

պարարտանյութերի մասին լրիվ ծանոթություն չունենալով, սովորողներում և կոլխոզներում պարտահականորեն խառնում են հանքային պարարտանյութերը մեկը մյուսի հետ, որի հետևանքով մի շաբաթ հանքային պարարտանյութեր կորցնում են իրենց դրսկան հատկանիշները և սննդանյութերի որոշ մասը դառնում է գժվարալույթ և բույսերի համար գժվար մատչելի:

Խստիվ արգելվում է պահեստներում խառնել իրար հետ այն պարարտանյութերը, որոնցից մեկը պարունակում է ամունիակ, իսկ մյուսը՝ կիր. օրինակ՝ չի կարելի խառնել ամունիում սուլֆատը կալցիում ցիանամիդի, թումասղակի հետ, ինչպես և չի թույլատրվում խառնելու գոմաղը կրի հետ, քանի որ այս բոլոր գեղքերում ազոտի կորստի վտանգ կա:

Արգելվում է խառնել սուլփերֆոսֆատը այն պարարտանյութերի հետ, որոնք պարունակում են կալցիում (կիր) և մագնիսիում, քանի որ այդ գեղքում հեշտ լուծվող ֆոսֆորը դժվարալույթ է դառնում:

Որոշ գեղքերում պարարտանյութը կարելի է խառնել օդապօրձելուց 24 ժամ առաջ, և, վերջապես, կան հանքային պարարտանյութեր, որոնք կարելի է անարգալ խառնել իրար և պահել խառնած վիճակում երկար ժամանակ:

Պետք է նկատի ունենալ նաև, որ պարարտանյութերն իրար հետ խառնելիս կարող են փոխվել նրանց փիզիկական ուժեխանիկական հատկությունները՝ նրանց հիգրոսկոպիականությունը (ջուր կլանելու ընդունակությունը), պարարտանյութի կալչողական հատկությունը և այլն:

Այս բոլոր հատկությունները հաշվի առնելով կազմված է մի հատուկ տեղեկատու տախտակը որի օգնությամբ կարելի է հեշտ կերպով որոշել, թե կարելի՞ է արդյոք խառնել այս կամ այն պարարտանյութը մեկը մյուսի հետ։ Այդ տախտակը բերված է 9-րդ հջում:

Այս սխեմայից պետք է օգտվել հետեւյալ կերպ. եթե ցանկանում ենք երկու պարարտանյութ խառնել իրար հետ, ապա այդ պարարտանյութերից մեկը անունը պետք է փնտուել վերև (հորիզոնական) շարքում, իսկ մյուս պարարտանյութի անունը՝ աջ կողմում, ուղղահայաց շարքում։ Այդ երկու շարքերի խաչաձևան կետում քառակուսին ցույց կտա, թե թույլատրվում է

ԿՈՄԱՐ	ԱՄՐՈՇԻՈՒՄ	ՔՐԵՋՆԵՐ	ՀԱՐՎԱԴՐ	ԱՄՄԱՆ	ԿՈՎՈՎԱՐ	ՎԱՐ	ԿԻՐ
ՀԱՐՎԱԴՐ	ՀԱՐՎԱԴՐ	ՀԱՐՎԱԴՐ	ՀԱՐՎԱԴՐ	ՀԱՐՎԱԴՐ	ՀԱՐՎԱԴՐ	ՀԱՐՎԱԴՐ	ՀԱՐՎԱԴՐ
ԱՄՄԱՆ	ԱՄՄԱՆ	ԱՄՄԱՆ	ԱՄՄԱՆ	ԱՄՄԱՆ	ԱՄՄԱՆ	ԱՄՄԱՆ	ԱՄՄԱՆ
ՔՐԵՋՆԵՐ	ՔՐԵՋՆԵՐ	ՔՐԵՋՆԵՐ	ՔՐԵՋՆԵՐ	ՔՐԵՋՆԵՐ	ՔՐԵՋՆԵՐ	ՔՐԵՋՆԵՐ	ՔՐԵՋՆԵՐ
ՀԱՐՎԱԴՐ	ՀԱՐՎԱԴՐ	ՀԱՐՎԱԴՐ	ՀԱՐՎԱԴՐ	ՀԱՐՎԱԴՐ	ՀԱՐՎԱԴՐ	ՀԱՐՎԱԴՐ	ՀԱՐՎԱԴՐ
ՎԱՐ	ՎԱՐ	ՎԱՐ	ՎԱՐ	ՎԱՐ	ՎԱՐ	ՎԱՐ	ՎԱՐ
ԿԻՐ	ԿԻՐ	ԿԻՐ	ԿԻՐ	ԿԻՐ	ԿԻՐ	ԿԻՐ	ԿԻՐ

արգյոք խառնել այդ երկու պարարտանյութերը: Եթե քառակուսին սեացըած է, կնշանակի տվյալ պարարտանյութերը արդեմում է խառնել միմյանց: Եթե քառակուսին արտահայտված է զծերով, ապա մեզ հետաքրքրող պարարտանյութերը կարելի է խառնել իբրա հողը մտցնելուց ոչ ավելի, քան 24-ժամ առաջ: Սպիտակ քառակուսիները ցույց են տալիս, որ պարարտանյութերը կարելի է խառնել միմյանց առանց որևէ վտանգի:

Բերենք մի քանի օրինակ՝

ա) Կարելի է արգյոք խառնել ամոնիում սուլֆատը սուլֆեր փոխատի հետ. շարքերից մեկում գտնում ենք սուլֆերփոխատը, մյուսում՝ ամոնիում սուլֆատը. երկու շարքերի խաչաձևմտն կետում հանդիպում ենք զծերով արտահայտված քառակուսու: Կնշանակի ամոնիում սուլֆատը կարելի է խառնել սուլֆերփոխ-

Փատի հետ, հոդը պարաբռացնելուց 24 ժամ առաջ: Այդ խառնությունը չի կարելի պահել ավելի երկար ժամանակ, քանի որ ամոնիում սուլֆատի և սուլֆերֆոսֆատի միջև քիմիոլիան սեակցիա է ընթանում, որի հետևանքով առաջանում է զիգոս, այդ պարաբռանյութի խառնուրդը կոշտանում է և դառնում դժվար օգտագործելի:

բ) Կարելի է արդյոք խառնել ամոնիում սուլֆատը թումացլակի հետ. ուղղահայց աջ շարքում գտնում ենք ամոնիում սուլֆատը, իսկ վերին հորիզոնական շարքում թումացլակը, երկու շարքերը խաչաձևկում են սև քառակուսու մեջ. կնշանակի ամոնիում սուլֆատը չի կարելի խառնել թումացլակի հետ, և այդ երկու պարաբռանյութերը պետք է հոդը մտցնել առանձին-առանձին, քանի որ ամոնիակային պարաբռանյութերը խառնելով այն պարաբռանյութերի հետ, որոնք կիր են պարզունակում, ամոնիակի (ազոտի) կորստի վտանգ է ստեղծվում:

գ) Կարելի է արդյոք խառնել սուլբերֆոսֆատը կալցիում ցիանամիդի հետ. շարքերից մեկում (հորիզոնական) փնտում ենք սուլպերֆոսֆատը և աջ կողմի շարքում կալցիում ցիանամիդը. խաղածեման կետում սև քառակուսին ցույց է տալիս, որ արգելվում է խառնել սուլպերֆոսֆատը կալցիում ցիանամիդի հետ:


Ինչպես վերը նշեցինք, չի կարելի խառնել սուլպերֆոսֆատն այն պարաբռանյութերի հետ, որոնք պարունակում են կալցիում (կիր) և մազնեղիում, քանի որ այդ գեղքում սուլպերֆոսֆատի հեշտ լուծվող ֆոսֆորական թթուն կալցիում ցիանամիդի կիր ազդեցությամբ վեր է ածվում դժվարալույթ ազի և դառնում բույսի համար անհամեմատ ավելի դժվար մատչելի:

Բոլոր կոլխոզներում և սովխոզներում հանքային պարաբռանյութերը ճիշտ և նորմալ պայմաններում պահելու գործը հանդիսանում է մեր գյուղատնտեսների առաջնակարգ պարաբռականությունների մեջ: Դյուղատնտեսական կուլտուրաների բարձր բերքատվությունը հնարավոր է ապահովել միմիայն այն գեղքում, եթե ճիշտ և ժամանակին կիրառվեն բոլոր ազդենությունները: Այդ թվում հանքային նյութերով պարաբռացման աշխատանքը հանդիսանում է մեր սոցիալիստական գյուղատնտեսության առաջնային գործությունը:

Քիմիական պարաբռերն իրարից տարերելու առաջ  
համանիշներ

	Քիմիական պարաբռ, անունը	աննդ. պարու- նակութ.	արտաքին տեսքը	միջին խոնավ.	համար- թյուններ
1	Ամոնիակային սելիտրա	33—34% ազոտ	սպիտակ գույնի բյու- րեղական զգալի խո- նավություն ունե- ցող աղ	մինչև 50%	արագ կլա- նում է օգի խոնավու- թյունը, կրա- կի վրա այր- վում է, ջրի մեջ լուծ- վում է
2	Ամոնիում սուլֆատ	20—21% ազոտ	սպիտակ կամ մոխրա- գույն բյուրեղական փաղի	2%	թույլ է կլա- նում խոնա- վությունը
3	Լեյնա սելիտրա	25—26% ազոտ	սպիտակ կամ մոխրա- գույն, որոշ զեղպե- րում գեղնագույն փոշի	7%	կլանում է խոնավու- թյուն
4	Կալցիում ցիա- նամիդ	17—22% ազոտ	մուգ մոխրագույն կամ ու գույնի թիթե փաղի	խոնավ. չունի	փոշիանում է և աղջում լորձաթա- ղանթի վրա
5	Սուլփերփոսֆատ	14—18% Կրբեմ ավելի $P_2O_5$	բաց մոխրագույն ա- րագ գառնում է կընձ- կային	5—15%	մասամբ լուծվում է ջրում
6	Ամմոֆոս	40—55% $P_2O_5$ և մաս 15% N	մոխրագույն կամ սպի- տակ գույնի	մինչև 10%	ջրում համար- յա լուծվում է ամբողջու- թյամբ
7	Սիլինիոտ	13—15% և ավելի $K_2O$	գարզագույն բյուրեղ- ներով	մինչև 3%	ջրում լուծ- վում է
8	Կալիումական աղ	30—40% $K_2O$	սպիտակ գույնի	մինչև 3%	ամբողջու- թյամբ լուծ- վում է ջրամ, սեղանի աղի համ ունի:

1806



ղատնականության կարեռ և գործնական միջոցառումներից մեկը:  
Գյուղատնտեսական ֆրոնտի բոլոր առաջավոր աշխատող-  
ները պետք է անհրաժեշտ ծանոթություն ունենան քիմիական  
պարարտանյութերի հետ, որպեսզի բարձրացնեն պարարտանյու-  
թերի էֆեկտիվությունը և նրանց անկորուստ օգտագործումը:

Հանքային պարարտանյութերը ճիշտ պահելու համար մըդ-  
վոր պայքարը՝ պայքարը է բարձր բերքատվության համար:



Տեխնիկական խմբագիր՝ Մ. ԿԱՓԱԼԱՆՅԱՆ  
Մրգարիչ Ա. ԱՐԶԱՔԱՆՅԱՆ

Հանձնված է արտադրության 5/VII 1947թ., ստորագրված է տպագրու-  
թյան 24/VII 1947թ., Վ.Ֆ. 02706, պատվեր 570, հրամ. 436, տիրաժ 3000-  
3/4 տպագրական մամուլ, 1 մամուլում 38400 տպ. նիւ.

Հայկական ՍՍԻ Գիտ. Ակադեմիայի տպարան, Երևան, Արովյան 104.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008965

330

Գիւմ 2 Ռ.

